


րաններուն վրայ շինած է . բարձրու-
թիւնը Հռովմայ սուրբ Պետրոսի ե-
կեղեցւոյն գմբեթէն ալ աւելի է : Ըս-
գմբեթին ճարտարապետն էր Փիլիպ-
պոս Պրունեղեւոյ անունով մէկը ,
որ իր ճարտարութեամբը զարմացուց
զամէնքը , ու ճարտարապետութեան
կողմանէ Սիբէլանձեղոյէն ալ վար-
չմնաց : Կը պատմեն փլորենտացիք թէ
Սիբէլանձեղոն ալ այնչափ զմայլեր է
աս գմբեթին մեծութեանն ու գե-
ղեցկութեանը վրայ որ Հռովմայ սուրբ
Պետրոսի գմբեթը շինելու համար
երթալու ատենը ըսեր է ասոր . “Սը-
նաս բարով սիրելի . կ'երթամ Հռովմ-
բան մը կը շինեմ որ քեզի նման պիտի
ըլլայ , բայց քեզի պիտի չհասնի ” : Ըս-
մայր եկեղեցին կ'ըսուի Սուրբ Ըս-
տուածածին ծաղկանց :

Եկեղեցւոյ ճակտին ձախակողմն է
գեղեցիկ ու հռչակաւոր քառակուսի
զանգակատունը՝ գոթացի ու գերմա-
նացի խառն ճարտարապետութեամբ ,
բարձրութիւնը 250 ոտնաչափ , բոլոր
գոյնզգոյն քարերով զարդարած : Ըսոր
ձեւը Նիոթթոն տուաւ ու իր փո-
րուածքներովը զարդարեց : Կարողոս
Ե կայսրը այնչափ հաւնէր էր աս զան-
գակատան՝ որ առջի տեսնելուն ըսեր
է . “Փլորենտացիք պէտք է որ ասի-
կայ պահարանի՝ մէջ դնեն ու անանկ
պահեն ” :

Հոս գրուած պատկերին մէջ մայր
եկեղեցիէն զատ՝ կ'երևնայ զանգա-
կատունը , և Սկրտարանը՝ որ վեցան-
կիւնի եկեղեցի մըն է , և ատենով
քաղաքին մայր եկեղեցին է եղեր :
Իսկ հրապարակին մէջի թափօրը սք
Հաղորդութեան տօնին փառաւոր
թափօրն է :

Փլորենտիայի բնակիչները 90,000
կը սեպուին : Եզունին մաքուր Խտա

լերէն է , բայց հասարակ ժողովրդեան
պակասութիւնն է որ գրեթէ ամէն
բառի մէջ + ու 4 տառերը հոյի պէս
թանձր կը հնչեն : Սաճառականու-
թիւնն ու արհեստները ատենով ա-
ւելի ծաղկած էին քան թէ հիմա .
բայց հիմայ ալ անուանի են կարծր
քարերու վրայ փորուածքները և միւ-
սիննէ շինած նկարքները որ յառաջի-
կ'ըսուին : Ըս քաղաքս ծնած են շատ
երևելի Խտալացիներ . ինչպէս Տան-
թէ , Փեթրարքա , Պոքքաչիոյ , Պեր-
նի , Կուրչիարտինի , Սաքքիաւել-
լի , Գալիլէոս , Սիբէլանձեղոյ , Ըմ-
բիկոս Սեսփուլլի և այլն :



ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ռազական երգեր :

ՌԱՄԿԱԿԱՆ երգը՝ ազգային ու-
գւոյն մէկ ձայնն է , որ շատ հեղ ու-
րիշ կողմանէ մեռած կամ մարած ա-
տենն ալ՝ դեռ այսպիսի երգոց մէջ
կենդանի կը մնայ . անոր համար ազ-
գային երգ ալ կ'ըսուի , և աս անու-
նովս յիշեր ենք մենք ալ օրագրիս Ա
տարւոյն 21 թուին մէջ : Թիէ որ աս
երկու անուանս մէջ տարբերութիւն
կայ , աս է որ ազգային երգը կրնայ
վսեմ ոճով ու լեզուով ալ գրուիլ .
իսկ ռամկականը գրեթէ միշտ պարզ
և ռամիկ լեզուով կը գրուի : Ըսս-
պիսի երգերը շատ անգամաւելի լաւ
կ'իմացընեն ազգին հանձարը՝ քան
թէ ծանր գրուածքներ . և կը գրտ-
նուին անոնց մէջ անանկ սքանչելի
զուրցուածք՝ որ միայն իրենց ռամկա-
կան անունին համար հասարակ բան
մը կը կարծուին , բայց ճշմարտութիւն
գերագոյն գրուածոց կարգը անցնե-
լու են : Ըս գերազանցութեան մեծ
և յայտնի պատճառը աս է , որ ասանկ
երգեր կամ զուրցուածքներ սրտէ ա-
ռաջ եկած են , և սիրտը միշտ վար-
պետ է . իրեն վարպետութիւնը հոս

1 Ճիոթթոն աշխարհքիս վրայ երեցած կարգէ
դուրս մարդիկներէն մէկն է , որ երկրագործ ու
հովիւ էր առաջ , ետքը Չիմապոնէ անունով ե-
րևելի պատկերահանին աշխերտ եղաւ , ու քիչ ա-
տենի մէջ զանիկայ գերազանցեց :
2 Գրագործ , սիւնձ :

կ'երևայ , որ չէ թէ միայն գեղեցիկ
և հզօր իմաստներ կ'ընծայէ , այլ նաև
շատ հեղ ան իմաստներուն յարմար
ընտիր շարադրութիւն մը կուտայ , և
տգէտը անանկ լաւ քերական կ'ընէ՝
որ իմաստունը կ'ապշի :

Այն ազգի մէջ ալ պակաս չեն այս-
պիսի երգեր . մեր մէջ ալ թերևս կար-
ծածնէս աւելի . որոնցմէ մէկը վերոյի-
շեալ թուոյն մէջ հրատարակեցինք ,
և ուշիմ ընթերցողը թէ որ մտքով ու
սրտով կարգաց , կարծեմ չվախնար
ան երգը՝ որ Ա անայ ծովակին եզերքը
կարապի մը պէս երգեց մտերիմը իր
մտերմին վրայ , մեր Արեւիկացոյն և
Շ նորհալոյն ընտիր տաղերուն կար-
գը ճանչնալ : Գնենք հոս ուրիշ մըն
ալ՝ որուն նիւթը թէպէտ առջինէն
շատ թեթեւ է , բայց լեզուն աւելի
մաքուր , և բառերուն ընտրութիւնը
սքանչելի , որ կըցուցընէ թէ գրողը
սակաւագիւտ ընտրողութիւն մը ու-
նի եղեր . և աս ընտրողութիւնս ոչ
միայն բառերուն , այլ և իմաստնե-
րուն մէջ ալ կ'երևնայ : Արտեղծէ
բանաստեղծը կաքաւ մը , որ Հայա-
ստանի ընտիր թուոյններէն մէկն է .
աս կաքաւին բերնէն իր տխուր բազ-
դը և վիճակը կարծես թէ մարգա-
րէաբար կընկարագրէ . կի՞թէ տես-
նելով որ ուրիշները անտարբեր են
իր խեղճութեանը , իրեն վրայ լացող
մը չկայ , ինքը իր գերեզմանին վրայ
նստած կուլայ , և իր ընկերներն ալ
լաց կըշարժէ :

- ՆԸՍՏԵԱԼ կայր ու լայր կաքուկն
- Ի վերայ քարին , Ա՛յ հաւեր ,
- Ու գանկատ կ'անէր ձագերուն ,
- Թըռչունք , Ա՛յ հաւեր .
- Ի բարձր լեռունք ելայ ,
- Ի բարձր լեռունք ելայ ,
- Ի կանաչ մարգեր նայեցայ . Ա՛յ հաւեր :
- Իջի որոգայթ ընկայ ,
- Իջի որոգայթ ընկայ ,
- Ի վարմն մէջ 'ի ծովակին . Ա՛յ հաւեր .
- Եկին զիս 'ի վեր առին , (ԿԵԿԷ)
- Ձահաբեկ սուրն ցրցուցին . Ա՛յ հաւեր :
- Ձայս իմ կարկըրուն վըզկա (ԿԵԿ .)
- Յականջէ յահանջ զենեցին . Ա՛յ հաւեր :
- Ձայս իմ կարմրուկ արիւնս (ԿԵԿ .)
- Ի գետին 'ի վար վաթեցին . Ա՛յ հաւեր :

- Ձայս իմ կարմրած կրոնուցս (ԿԵԿ .)
- Կըրակին կածըն հասուցին . Ա՛յ հաւեր :
- Ձայս իմ մանտրուքայլ ոտկունքս
- Ի ծընկացս 'ի վար կրտեցին . Ա՛յ հաւեր :
- Ձայս իմ գունըգգուն փետուրս
- Մէկն 'ի սար արին մէկն 'ի ձոր . (և այլն :)
- Ձայն որ 'ի սարերն ընկեր
- Ձայն 'իջեր քամէկն ու տարեր .
- Ձայն որ 'ի ձորերն ընկեր ,
- Ձայն ելեր հեղեղն ու տարեր :
- Եւ սուրբ Գրիգորի նրման
- Չիս 'ի խոր վերայն իջուցին .
- Եկին զիս 'ի վեր առին ,
- Մաճիկս հաւասար ցրցուցին .
- Եւ սուրբ Յակովկայ նրման
- Մասն մասն կրտորտեցին .
- Չլաւաչն ինձ պատանք դրոխ
- Ու կարմիր գինով զիս թաղեցին :
- Ես ձայն զերեմիային ածի
- Նախահօրն ու մօրն Եւայի :

Գեղեցիկ կերպ մըն է բանաստեղ-
ծին սկսուածքը , Այսպէս կայր ու լայր .
գեղեցիկ է նաև կաքուկին շարու-
նակած ողբը . ան Բարձր լեռունք և
կանաչ մարգերը պարզ և ընտիր մակ-
գիրներով վսեմութիւն և փափու-
թիւն մը կուտան զուրցուածքին :
Բողոր երգին մէջ ալ աս փափուկութիւ-
նը և ընտիր բառերը պահուած , մէյ-
մէկ բառով մեծ գեղեցիկութիւն կու-
տան . ինչպէս ան ահաբէէ սուրբ , ան
կարկըրուն վըզիկն՝ որուն ձայնը կարծես
թէ իր յետին շունչը քեզի ալ կըլսե-
ցընէ , և սպանման բացատրութիւնը
որ յահանջէ յահանջ զենեցին . թողունք
ան կարմրուկ արիւնք և կարմրած կըր-
տուք . բայց ան մանտրուքայլ ոտկունք
որ 'ի ծընկացս 'ի վար կրտեցին , ան ման-
տրուքայլ ոտկունքը՝ Նախահօրն ու
Աատուղըսի փափուկ բառերուն հետ
չփոխուիր : Շատ բնական և գեղե-
ցիկ կերպով կը զուրցէ գունզգուն
փետուրներուն ողորմելի վիճակն ալ ,
և սրտաշարժ բարև մը կուտայ իր ան-
ցած գնացած վայելութեանը : Եւ
տեղի նմանութիւնները թէպէտ սրբ-
բազան բաներէ առած՝ կաքաւէ մը
հետու են , բայց բունազգօսած նմա-
նութիւններ չեն , այլ նաև համեմատ-
այսպէս ալ գոց կերպով մը ուտուիլը
կը բացատրէ լաւաշով պատնուելով և
կարմիր գինով թաղուելով :

Ար համարձակիմ ըսելու թէ աս երգս անոնցմէ մէկն է, որոնց վրայ չկրնար մէկը բան մը աւելցնել կամ պակսեցնել. և կրնայ գեղեցիկ օրինակ մը ըլլալ նաև օտար ազգաց, միայն թէ հայերէնին քաղցրութիւնը կարելի ըլլայ պահուիլ, որ անկարելի է. և կարծեմ աւելի վսեմ հայկական լեզուով ալ գրուած ըլլար նէ՛ նոյն աղուորութիւնը չէր ունենար: Այոր համար նորէն կը յայտնենք փափաքնիս ուսումնասէր և ազգասէր ընթերցողաց, որ այսպիսի ազգային երգերը՝ որ հայաստանի այլևայլ գաւառներու մէջ կերպրցուն՝ ժողովեն. վասն զի անոնցմէ կրնան շատ մարգարիտներ ելլել, և թերևս ատենով հայոց գրականութեան տաճարին մէջը պատուաւոր տեղ մը ունենալ:

Բ Ա Ր Ո Յ Ա Վ Ա Ն

ԽՆԼԱՅԻ ԽՕՍՔԵՐ ՈՒ ԶՈՒՆՐՃԱԼԻ ԳԻՊՈՒՍԵՆԵՐ

Պարծենկոտին որսը՝ պարասխան:

ԳԱՂՂԱՅԻ բանաստեղծին մէկը միտքը դրած է եղեր թէ ինքը շատ աղէկ ողբերգութիւններ կը շարագրէ: Ար հարցնեն ասոր թէ կատակերգութիւն ալ ինչո՞ւ չես շարագրեր: — «Քանի որ Սոլիերը կարգացի նէ՛ ես կատակերգութիւն չեմ շիներ», կ'ըսէ: Սէկն ալ կը դառնայ կ'ըսէ իրեն. «Կերևոյ թէ Ռասինը դեռ չես կարդացած»:

Քասկը ծակ ու ծախքը շար մարդիկ:

ՈՒԴՈՎԻԿՈՍ ԺԴ օր մը իր իշխաններէն մէկուն հետ պտըտելու ատենը կը դառնայ կ'ըսէ անոր. «Միտքդ կուգայ որ ատենով սըտեղս հովի ջաղացք՝ մը կար», — «հրամեր ես, տէր արքայ, կ'ըսէ իշխանը. հիմա ջաղացքը չկայ, բայց հովը կեցած է»:

1 Եւ քեյիբէի:

Իր գիտնալիք ուրիշէն գիտնալ:

ՍԱՐԴՈՒՆ մէկը աչքի ցաւ ունեցեր է եղեր երկար ատեն. օր մը մեծերէն մէկը կը հարցնէ ասոր թէ «Աչքդ ինչպէս է», — «Պարօն, կ'ըսէ մէկալը. քեռորդուցս կարծիքն ան է թէ հիմա աւելի լաւ կը տեսնեմ. և հաւանական է»:

Անի Բանին դիւրինը քիւրուող:

ՏԱՃԻԿ տղուն մէկը գաղղիարէն սորվելու ատենը շատ դժուարութիւն քաշելով, կը դառնայ կ'ըսէ վարպետին. «Ի՞նչ զարմանալի մարդիկ էք. էաու (eau) կը գրէք, օ կը կարդաք. աու (ջուր) ըսէք նէ՛ աւելի լաւ չըլլար»:

Բաճբասանի:

ԻՆԽԱՆԱԻՈՐԻՆ մէկը տեսնելով որ երկար ատեն իր բարեկամին սեղանին վրայ կերակուրները խիստ գէշ են, ու բաճբասանքը շատ, օր մը չգիմանար ու կ'ըսէ յանկարծ տանտիրոջը. «Ո՛հ, պարօն. չոր հացով եղբարցս միսը ուտելէն ձանձրացայ»:

Սպասեցնելէն ետք անհամա-միտն:

ԵՐԲՈՐ 1783էն հաշտութիւն ըրին Վաղղիացիք Անգղիացուց հետ, Սոր փա անունով Վաղղիացուց սպարապետը ինգրեց ձեմարանէն որ իմաստուն խօսք մը տան՝ ան հաշտութեը համար կոխուած պղնձէ պատկերին վրայ փորագրելու: Ա եց ամիս անցնելէն ետքը ձեմարանը իր անդամներուն մէկուն ձեռքովը կը խրկէ Սորփային աս արձանագիրը՝ Սպաղաղու-միտն ընդ Անգղիացիս: — Եւ ընդ հոգուոյդ քոսմ կ'ըսէ Սորփա, ու կառնէ արձանագիրը մէկգի կը գնէ: